+«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ **ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Հետազոտող ուսուցիչ՝Խաչատրյան Անի Ռազմիկի

Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Աղաջանյան Ռուզան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

Գլուխ.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1.1 Միջառարկայական կապերի ստեղծման դերը սովորողների ուսումնառության գործընթացում.....5

1.2 Միջառարկայական կապերի ստեղծման հնարավորությունը աշխարհագրության դասի շրջանակներում.....11

Եզրակացություններ և առաջարկություններ.....15

Օգտագործված գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցներին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը նոր խնդիրներ է առաջադրում ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Համակողմանի զարգացած սերունդ ունենալու հանգամանքով պայմանավորված՝ հաճախ դժվար է պատկերացնել խնդրի լուծումը մեկ ուսումնական առարկայի շրջանակներում, ուստի ուսուցման տեսությունում և պրակտիկայում օգտագործում են միջառարկայական ընդհանրացումներ:

Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա սովորողի համար դառնում է ավելի գրավիչ, եթե այն սերտորեն կապվում է բնության, շրջապատող աշխարհի և հասարակական կյանքի հետ: Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը:

Առավել արդյունավետ է միջառարկայական կապերի իրականացումն այն դեպքերում, երբ այլ առարկաների ու դասընթացների գիտելիքները ոչ միայն ընդօրինակվում ու կիրառվում են որպես լուսաբանում, այլև գործածվում են որպես սովորողների մտածողության ակտիվացման միջոց, համեմատության ու ուսումնական նյութի ընդհանրացման, վերլուծության նպատակով: Միջառարկայական կապերով ուղեկցվող ուսումնական գործընթացն ունի վառ արտահայտված կիրառական ուղղվածություն, թույլ է տալիս սովորողներին ցուցադրել մի շարք առարկաներից ունեցած իրենց պատկերացումներն ու գիտելիքները, ուստի այդ ամբողջական կիրառությունը բարձրացնում է նաև սովորողների մոտիվացիան:

Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով՝ ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Իր կարիքները բավարարելու՝շփվելու, սովորելու և աշխատելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, հիշի, մտածի և արտահայտվի: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու գործունեությունը

անհնար է: Ճանաչողական կարողությունները զարգանում են գործունեության մեջ: Կարող ենք ասել, որ սովորողին անհրաժեշտ մի շարք կարողությունների և հմտությունների՝ այդ թվում նաև մետաճանաչողության զարգացման համար բավականին արդյունավետ միջոց է ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի ստեղծումը: Դասի ընթացքում միջառարկայական կապերի ճիշտ համադրումն ու կիրառումը սովորողին տալիս է հնարավորություն մեկ դասի շրջանակներում ստանալ մի շարք կարողունակություններ, գործնական աշխատանքների ժամանակ կիրառել դրանք, ինչին զուգընթաց զարգանում է նաև սովորողների մետաճանաչողությունը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն էլ ունեն իրար լրացնելու և ինտեգրվելու լայն հնարավորություններ, ինչը ուղիղ ազդեցություն կարող է ունենալ սովորողի գիտակցական մակարդակի բարձրացման վրա:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Մեր ուսումնասիրության արդիականության համար հիմք է հանդիսացել ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի ստեղծման միջոցով սովորողներին մետաճանաչողական կարողություններով զինելու անհրաժեշտության և կարևորության շեշտադրումը:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ դասի ընթացքում ուսուցչի կողմից միջառարկայական կապերի ստեղծման նշանակությունը սովորողների մետաճանաչողության և մի շարք այլ կարողունակությունների զարգացման համար:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է ցույց տալ միջառարկայական կապերի ստեղծման, ինտեգրված դասերի օգնությամբ սովորողների մետաճանաչողության զարգացման եղանակներն ու ուղիները:

Գլուխ.1 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1.1 Միջառարկայական կապերի ստեղծման դերը սովորողների ուսումնառության գործընթացում

Այսօր գիտելիքից բացի սովորողից պահանջվում են մի շարք կարողունակություններ, որոնք թույլ կտան վերջինիս ճիշտ դրսևորվել, կողմնորոշվել կյանքի ցանկացած իրավիճակում: Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն մարդ կարող է կառավարել՝ հենվելով իր իմացական ու գործառական ներուժի վրա: Հենց սրանով է պայմանավորված կրթության արդիականացման գործընթացը, որի հիմնական նպատակն է ունենալ ինքնուրույն, նախաձեռնող ու նորարար սովորող: Այստեղ կարևորագույն առաքելություն ունեն հարակրթական ուսումնական հաստատությունը, ուսուցիչը, ճիշտ պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն: Միջառարկայական կապերի ներգրավումը կարող է բարձրացել ուսուցման գիտականությունը, մատչելիությունը, տալ սովորողին գործնական կարողություններ՝ այդպիսով ապահովելով կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքների բավարարումը:

Սովորողը պետք է լինի ճկուն, կարողանա ընտրել, համեմատել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալը կնշանակի՝ ունենալ գիտակցական բարձր մակարդակ, ճանաչողական կարողություններ, ինչն էլ այսօր կարևոր է արդի աշխարհում:

Ճանաչողական կարողությունները միմյանցից առանձին չեն դրսևորվում, սա մի բարդ համակարգ է, ուստի դրանց զարգացման արդյունավետ ուղիներից մեկը համագործակցային մոտեցումներն են՝ ի դեմս ինտեգրված դասի: Օրինակ՝ լեզուների ուսումնասիրության ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են բարդ ճանաչողական ունակություններ, որոնք հիմք են դառնում մտածողության, խոսքի և հաղորդակցման հմտությունների ձևավորման համար: Հաջորդիվ մյուս առարկաների ուսուցման ընթացքում այդ լեզվամտածողությունը հիմք է դառնում այլ կարողունակությունների զարգացման: Աշխարհագրությունն էլ սովորողին տալիս է հնարավորություն ճանաչել աշխարհը, մարդուն, այն միջավայրը, որտեղ ինքն ապրում է: Կարող ենք ասել, որ ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մեկը մյուսին, դառնում շարունակողը, լրացնողը, ամբողջացնողը: Նորօրյա

աշխարհում մեծ նշանակություն ունի առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը:

Միջառարկայական կապերի ստեղծումը նպատակ ունի նաև նպաստել սովորողների մոտ այնպիսի բարձր մտավոր գործառույթների զարգացումը, ինչպիսիք են.

- իմաստալից ընկալումը,
- ստեղծագործ երևակայությունը,
- հասկացությունների մեջ մտածողությունը,
- կամայական հիշողությունը,
- խոսքային կարողությունը,
- վերլուծելու, համեմատելու, դասակարգելու կարողությունը:

Այս բոլորի համալիր առկայությունը կարող է նպաստել սովորողների մետաճանաչողության զարգացմանը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականություն միջառարկայական կապերով, ինչի համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը:

Ժամանակակից ուսուցչի խնդիրներից մեկը սովորողին բացահայտելն ու ցույց տալն է միջառարկայական հաղորդակցություններվրա կոնկրետ օրինակներ: Սա չափազանց կարևոր պայման է որակյալ կրթական համակարգ կառուցելու տեսանկյունից: Ի վերջո, գործնական խնդիրների լուծման համար դրա կիրառման արդյունավետությունը ուղղակիորեն կախված է գիտելիքների բարդությունից:

Ինչպես նշեցինք, միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակտեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն: Ուսումնական հաստատության ուսուցիչը համագործակցում

է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[1]:

Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրներ գտնելու կարողությունները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Նման դասերի ժամանակ կարելի է իրավիճակներ ստեղծել, որ սովորողը մտածի և ինքնուրույն հասկանա առաջադրված խնդրի լուծման եղանակները: Այս գործընթացի ժամանակ վերջինիս մեծապես կարող է օգնել մետաճանաչողությունը: Զարգացած մետաճանաչողություն ունեցող սովորողը ջանք է գործադրում խնդրի տեսակը ճանաչելու, առաջադրանքը վերլուծելու, իրեն արդեն իսկ ծանոթ խնդիրների հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու հարցում, իսկ մյուս դեպքում՝ այն արդեն իսկ մետաճանաչողական փորձի առկայություն է ենթադրում, երբ աշակերտը, առանց ջանք գործադրելու, կարողանում է որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ ճանապարհը[2]:

Մետաճանաչողության վրա մեծապես ազդում է նաև ճիշտ ժամանակին արված հետադարձ կապը: Հետադարձ կապը, դա մի համալիր գործողությունների շղթա է, որի միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցման գործընթացները: Հետադարձ կապը թույլ է տալիս սովորողին շտկել սեփական սխալները, իսկ ուսուցիչն էլ հնարավորություն է ստանում համապատասխան տեղեկատվությունից պատկերացում կազմել ուսումնական գործընթացի այն ասպեկտների մասին, որոնց պետք է վերստին անդրադառնալ և ավելի շատ ուշադրություն դարձնել: Այս իմաստով հետադարձ կապը կարող է դրական ազդեցություն ունենալ ուսումնական գործընթացի վրա, քանի սովորողին հստակ մատնանշվում է խնդիրն ու դրա

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարության որոշում:

[2] http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf Մետաճանաչողությունը կրթության մեջ:

լուծման եղանակը: Մետաճանաչողության զարգացմանը մեծապես կապված է ակտիվ ուսուցման հետ:

Սովորողին դասը հետաքրքիր դարձնելու համար ուսուցիչը հաճախ է դիմում փոխգործուն ուսուցման մեթոդներին: Ուսուցման փոխներգործուն մոդելն անպայման ենթադրում է ուսուցման գործընթացում ստեղծագործական առաջադրանքների առկայություն, ինչպես նաև պարտադիր շփում աշակերտ-ուսուցիչ համակարգում: Փոխներգործուն մոդելը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողներն ակտիվորեն փոխգործակցում են: Այս մոդելը ենթադրում է նաև կենսական իրավիճակների մոդելավորում, տեղեկատվական հոսքերի ներթափանցում սովորողների գիտակցության մեջ, որոնց շնորհիվ իրականանում է սովորողների ակտիվ գործունեությունը:

Փոխներգործուն ուսուցման գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է, իսկ վերջինիս հիմնական միջոցը, որը բացահայտում է անձի ընդունակությունները, իմացական և մտավոր ինքնուրույն գործունեությունն է:

Այստեղից կարելի է եզրահանգել, որ ուսուցչի գլխավոր խնդիրը դառնում է դասագործընթացում այնպիսի գործունեության ապահովումը, որը կարող է իրականանալ միայն ժամանակակից փոխներգործուն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ: Վերջիններիս օժանդակությամբ աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին, և ձեռք բերված գիտելիքը դառնում է նրա իսկ գործունեության արդյունքը: Այսպես սովորողն էլ ավելի շատ հնարավորություն է ունենու ցուցաբերել ինքնուրույնություն, ինչը շատ կարևոր է մետաճանաչողության զարգացման համար:

Վերցնենք օրինակ «Մետաիմացության թերթիկ» հնարը; Այս թերթիկը լրացնելիս կատարեք հետևյալ չորս քայլերը՝

- Ընթերցեք հարցերը:
- Դրեք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք:
- Դրեք «՞» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:
- Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում:
- Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք «՞» նշանը:

- Ստուգե՛ք՝ արդյոք ճիշտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել[3]:

Այս մեթոդի կիրառությունը հատկապես արդյունավետ է, երբ զուգորդվում է միջառարկայական կապերի ստեղծման հետ: Զարգանում են սովորողի ինքնահարցման, ինքնավերլուծության հմտությունները, նրանք սովորում են ավելի ակտիվորեն կարդալ՝ թեմային առնչվող իրենց հարցերին պատասխանները գտնելու համար: Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ մեթոդական հնարի կիրառման ժամանակ սովորողներին ուղղություն է տրվում, թե ինչպես նպատակային կերպով դասակարգել արդեն ունեցած և նոր տեղեկատվությունը:

Ուսուցչի համար կարևոր է սովորեցնել և նպաստել, որ սովորողը սովորածը մտապահի: Յուրաքանչյուր սովորող ունի իր ինքնաճանաչումը, և մենք չենք կարող ստիպել նրանց սովորել, բայց կարող ենք ստիպել մտածել: Որպեսզի սովորողներն ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում, դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Ուսուցիչը, նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները, պետք է ուղղորդի հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման: Այս ձևով զարգանում են նաև մտածողությունը, երևակայությունը:

Ասենք նաև, որ դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի , մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում: Աշխարհի մասին

[3] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 38:

պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Ուստի ուսուցչի շատ կարևոր հանգամանք է , որ դասավանդմանը զուգահեռ ուսուցիչը կարողանա սովորողի մոտ զարգացնել նաև արժեքային համակարգ: Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

1.2 Միջառարկայական կապերի ստեղծման հնարավորությունը աշխարհագրության դասի շրջանակներում

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը: Այս գործընթան իրականացնելու լավ հնարավորություն է տալիս աշխարհագրության դասը:

Օրինակ՝ պատկերացնենք մի այսպիսի իրավիճակ, երբ Հայաստանի աշխարհագրություն դասին ուսուցիչը միջին դպրոցում միջառարկայական կապ է ստեղծում պատմության և ինֆորմատիկա և հայոց լեզու առարկաների միջև: Նախօրոք սովորողներին ուսուցիչը հանձնարարել էր հավաքագրել տեղեկություններ Հատիս և Արայի լեռների մասին: Դասարանը բաժանելով խմբերի՝ ուսուցիչն առանձնացրել էր հետազուտության մի քանի թեմաներ, որոնց շուրջ պետք է հավաքագրվեր տեղեկատվություն:

- Տեղեկություններ Հատիս և Արայի լեռների աշխարհագրական դիրքի, լանդշաֆտի, բուսականության ու կենդանական աշխարհի մասին:
- Գտնել տեղանքի մասին ավանդազրույցներ:
- Գտնել նշված վայրերում առկա պատմամշակութային հուշարձանների ու հնավայրերի մասին տեղեկություններ:
- Գտնել լեռների անվան ստուգաբանություններն ու հնարավոր կրկնանունները:

Դասի ժամանակ խմբերը հերթով կներկայացնեն իրեն աշխատանքը տեսասահիկի օգնությանմբ, փոխադարձ հարցադրումներով կլրացնեն մեկը մյուսին, ապա կկազմեն ճանաչողական քարտեզներ: Ի՞նչ էր ակնկալում նմանօրինակ դասից ուսուցիչն ու ինչպիսի՞ վերջնարդյունքի հասավ:

Սովորողներն այս դասի շնորհիվ իմացան.

- Նշված լեռների աշխարհագրական դիրքի, բարձրության, կենդանական ու բուսական աշխարհի, բնակլիմայական պայմանների, ընդերքի և այլ ֆիզիկաաշխարհագրական բնութագրիչների մասին:
- Իմացան տեղանքում գտնվող մի շարք հնավայրերի, եկեղեցիների, բերդերի, այլ պատմամշակութային արժեքների մասին:
- Կատարելով պատմական էքսկուրս՝ իմացան, թե նշված վայրերը երբ և ում տիրապետության տակ են եղել:
- Իմացան, լեռների մասին առկա ավանդազրույցները, առասպելական պատմությունները:
- Բառարաններում փնտրեցին անունների ստուգաբանությունները, ծանոթացան կրկնանուններին:

Սովորողներն այս դասի շնորհիվ կարողացան.

- Կիրառել համացանցային մի շարք գործիքներ:
- Պատրաստել սահիկաշար:
- Հավաքագրել տեղեկություն, կառավարել տեղեկատվական հոսքերը:
- Օգտվել էլեկտրոնային բառարաններից:
- Աշխատել կոլեկտիվում:

Հաջորդիվ կարելի է ստացած գիտելիքները ստուգել թեստային աշխատանքի միջոցով: Բերենք նման աշխատանքի օրինակ.

Ստուգողական առաջադրանք

1. Որքա՞ն է Արայի լեռան բարձրությունը և որտե՞ղ է այն գտնվում:
2. Որտե՞ղ է գտնվում Հատիս լեռը:
3. Ներկայացրեք Արայի լեռան կենդանական աշխարհը:
4. Ի՞նչ գիտեք Արայի լեռան անվան ստուգաբանության մասին:
5. Ի՞նչ պատմամշակութային հուշարձաններ կան Հատիս լեռան շրջակայքում:
6. Ի՞նչ ավանդազրույցներ գիտես Հատիսի և Արայի լեռան մասին, որոնք կապ ունեն միմյանց հետ:
7. Մեծ Հայիքի ո՞ր աշխարհում են տեղակայված եղել տվյալ տարածքը:
8. Ինչպե՞ս են անվանել Հատիսն այլ կերպ:

- Շամիրամի լեռ
- Աստղիկի լեռ
- Փառանձեմի լեռ
- Այծեմնիկի լեռ

9. Ինչպիսի՞ն է կլիման Արայի լեռան շրջակայքում:
10. Քարտեզի վրա նշիր լեռների տեղակայման վայրերը:

Մետաճանաչողությունն այս պարագայում կօգնի սովորողներին մոբիլիզացնել իրենց ողջ ներուժը, հիշել, թե նախկինում երբ, կամ ինչ հանգամանքներում է առնչվել այդ վայրերից որևէ մեկին, ինչ կարող է մտաբերել: Սովորողը համակարգում է իր ողջ տեղեկատվությունը ստուգող հարցերի մեջ:

Կարևոր է նաև, որ ուսուցիչը հետաքրքրվի, թե ի՞նչ հանգամանքներում է սովորողն առչվել այդ վայրի մասին տեղեկություններին, էլ ի՞նչ կարող է ավելացնել, արդյոք այցելել է: Հետադարձ կապի ստեղծումը այս պարագայում շատ կարևոր է, քանի որ սովորողն ինքնանդրադարձի միջոցով կարող է գտնել իր բացթողումները: Աշխատանքի ավարտին ուսուցիչը կգրանցի հետևյալ արդյունքները.

- Սովորողը թեմայի շուրջ ամբողջացրեց իր գիտելիքները աշխարհագրություն, պատմություն, հայոց լեզու և ինֆորմատիկա առարկաներից, ինչում նրան օգնեց մետաճանաչողությունը,
- զարգացավ նրա լեզվամտածողությունը,

- կատարեց տեքստային աշխատանք,
- վերհիշեց նկարագրական տեքստի պահանջները,
- կիրառեց ինֆորմատիկայից իր գիտելիքները գործնականում,
- աշխատեց ուրվագծային քարտեզով, որոշեց տեղանքը,
- կատարեց ինքնանդրադարձ, տեսավ իր առավելությունները ու թերությունները:

Միջառարկայական կապերի իրագործումը ակտիվացնում է աշակերտների մտածողությունը, զարգացնում տրամաբանական մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը, սրա իրագործումը հնարավորություն է ստեղծում կրկնել, վերհիշել կամ ձեռք բերել նոր տեղեկություններ:

Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը: Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ[4]:

Այսպիսով, վերահաստատենք մեր այն պնդումը, որ միջառարկայական կապերի ստեղծումը բավականաչափ արդյունավետ կարող է անդրադառնալ սովորողի ակտիվության բարձրացման ու մետաճանաչողության զարգացման տեսանկյունից: Կարծում ենք, որ ուսուցիչը պետք է ընդաաջ գնա նոր կրթական մարտահրավերներին ու անցկացնի մեթոդապես հարուստ, հետաքրքիր ու ինքնատիպ դասեր: Կցանկանայինք ավելացնել նաև, որ սույն աշխատանքի վրա հենվելով՝ կփորձենք զարգացնել մեր սովորողների մետաճանաչողությունը:

[4] https://edumedia-depot.gei.de/bitstream/handle/11163/2180/791501744_2013_A.pdf?sequence=2 Աշխարհագրության առարկայական չափորոշիչ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կցանկանանք ևս մեկ անգամ կարևորել միջառարկայական կապերի դերը սովորողների մետաճանաչողության զարգացման համար: Միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին են դարձնում այս գործընթացը, քանի որ սովորողն այդ ակտիվ միջավայրում լիարժեք կարող է բավարարել իր հետաքրքրությունները, գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները:

Կարծում ենք, որ այստեղ մեծ է հատկապես ուսուցչի դերը: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, անուշտ, տեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի նաև հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ: Միջառարկայական կապերով համեմված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը: Հավելենք նաև, որ դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում,որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով:

Մեծագույն համոզմունք ունենք, որ այս ուսումնասիրության արդյունքը կլինի, որ բարձնարա նաև մեր՝ ուսուցիչներիս մոտիվացիան, որպեսզի ավելի հաճախակի դիմենք միջառարկայական կապերի օգնությանը՝ նպատակ ունենալով նաև զարգացնել սովորողների մետաճանաչողությունը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարության որոշում:
2. https://edumedia-depot.gei.de/bitstream/handle/11163/2180/791501744_2013_A.pdf?sequence=2 Աշխարհագրության առարկայական չափորոշիչ:
3. http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf Մետաճանաչողությունը կրթության մեջ:
4. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdfՈւսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020: